

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Երկրաբանություն և աշխարհագրություն

2, 2015

Геология и география

Երկրաբանություն

УДК 556.33.62; 556.36

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ
ԵՐԿՐԱԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ**

S. Գ. ՄԿՐՏՉՅԱՆ *

ԵՊՀ ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոն, Հայաստան

Աշխատանքում ներկայացվում է Երևան քաղաքի և մերձակա շրջանների երկրաբնապահպանական շրջանացման մեթոդիկան և արդյունքները, որտեղ տարածքները մաքնատիկական համակշռային եղանակով առանձնացվել են՝ չփոփոխած, փոփոխած և ուժին փոփոխած շրջանների:

Keywords: geological environment, vulnerability, hydrogeology.

Երկրաբանական միջավայրի պահպանության հարցը համարվում է առաջնահերթ հիմնախնդիրներից մեջը: Այն ավելի է կարևորվում խիստ բնակեցված քաղաքային տարածքներում, որտեղ փոփոխվում է լանդշաֆտը, իսկ ստորերկրյա ջրերը գտնվում են կենցաղային և արդյունաբերական աղոտուման վտանգի տակ:

Տեխնածին գործոնների ազդեցությունը քաղաքների և հարակից տարածքների վրա պայմանավորում է երկրաբանական միջավայրի (ԵՄ) բնապահպանական վիճակի փոփոխությունը: Քաղաքային և հարակից տարածքների երկրաբնապահպանական վիճակի քարտեզագրման համար կատարվում է ընտրված մասշտարի հանույթ, որի ընթացքում հավաքվում են տվյալներ ուսումնակիրքով տարածքի ռելիեֆի և երկրաբանական էկզոգեն (արտածին) գործընթացների վերաբերյալ, փաստագրվում են բոլոր տնտեսական օբյեկտները: Հորատանցքերում կատարվում են ստորերկրյա ջրերի մակարդակի չափումներ, նաև ջրի նմուշարկում հետագա ֆիզիկաքիմիական և կենսաբանական անալիզների համար: Փաստացի նյութի հիման վրա կատարվում է երկրաբնապահպանական քարտեզագրում, որում տարածքները տարբեր գործոնների համակշռային գնահատման եղանակով շրջանացվում են՝ ըստ խոցելիության աստիճանի:


Նյութը և մեթոդիկան: ԵՄ փոփոխածությունն այս կամ այն գործնթացների հետևանքով որոշվում է փոփոխածության գործակցով՝ $K=F_{\phi}/F_p$, որտեղ F_{ϕ} -ը՝ փոփոխած մակերեսն է, F_p -ն՝ տարածքի ընդհանուր մակերեսը: Տեխնածին փոփոխածության ընդհանուր գնահատականն արտածին երկրաբանական գործնթացների հետ համատեղ տրվում է բոլոր մասնավոր ցուցանիշների հաշվարկի հիման վրա հետևյալ բանաձիր օգնությամբ. $K=K_1 + K_2 + K_3$,

* E-mail: tiruhi@ysu.am

որտեղ K_3 ՝ փոփոխվածության, իսկ K_1 , K_2 , K_3 -ն՝ արդյունաբերական տարրեր օբյեկտների կամ արտածին երևույթների ակտիվության գործակիցներն են:

Երևան քաղաքը և նրա հարակից տարածքները բաժանվել են հետևյալ շրջանների՝ չփոփոխված կամ թույլ փոփոխված (Ա); փոփոխված (Բ); ուժգին փոփոխված (Գ): Յուրաքանչյուր շրջան բնորոշվում է երկրաբանական և գեոնորֆոլոգիական կառուցվածքի, ջրաերկրաբանական պայմանների առանձնահատկություններով և տեխնածին գործոնների նկատմամբ ցուցաբերած հակազդեցության տարրեր տեղամասերով: Այդ պատճառով շրջանները բաժանվել են ենթաշրջանների [1, 2].

Ա. Չփոփոխված, կամ թույլ փոփոխված շրջան (K միջև 25%): Զրադեցնում է ուսումնասիրված շրջանի հյուսիսային և արևելյան մասերը: Կախված՝ տեխնածին օբյեկտների բնույթից, քանակից և ԵՄ-ի վրա դրանց ունեցած ներգործությունից նկարագրվող շրջանը բաժանվում է չորս ենթաշրջանների (տես նկար):



Երևան քաղաքի և հարակից տարածքների երկրաբանական միջավայրի շրջանացման քարտեզ:

(Ա-1) Զրադեցնում է ուսումնասիրված տարածքի հյուսիսային մասը: Հիմնական տեխնածին գործոններն են Արզնի-Շամիրամ ոռոգման ջրանցքը և նրանից սկսվող առուները, սահմանափակ քանակով շինանյութերի արտադրությունը և գյուղատնտեսական-անասնապահական օբյեկտները:

(Ա-2) Կոտայք-Նոր Գյուղ բնակավայրերի հարակից ենթաշրջան: ԵՄ-ի վրա ազդող հիմնական գործոնները են՝ գյուղատնտեսությունը, անասնապահական օբյեկտները և ցանքատարածությունները:

(Ա-3) Արամուս-Ջորաղբյուր լեռնազագագաթների հարակից ենթաշրջաններ: Սեծ մակերես է զրադեցնում ուսումնասիրված տարածքի արևելյան մասում՝ ընդգրկում է Արամուս-Ջորաղբյուր բնակավայրերի բարձրադիր գոտիները (1500–1600 մ): ԵՄ-ի վրա ազդող տեխնածին գործոններն են փոքր ծախսի ոռոգման առուները՝ սահմանափակ քանակի շինանյութերի արտադրությունը, փոքր գյուղատնտեսական, անասնապահական, ինչպես նաև ցածրահարկ շինարարական օբյեկտները:

Բ. Փոփոխված շրջան (K 25–50%): Զրադեցնում է ուսումնասիրված շրջանի մեծ մասը: ԵՄ-ի փոփոխությունները պայմանավորված են արդյունաբերական, ջրատնտեսական, էներգետիկ, լեռնահումքային և այլ օբյեկտներով,

որոնց ազդեցությունը բնական պայմանների վրա արտահայտվում է տարրեր ձևերով: Շրջանը բաժանվել է վեց ենթաշրջանների:

(Բ-1) *Էրերուճի-ՋԷԿ-ի միջտեղամասային ենթաշրջան:* Զբաղեցնում է Երևան քաղաքի հարավային մասը՝ Էրերուճի ամրոցից մինչև ՋԷԿ-ի արևմտյան մասերը: Երկրաբանական կտրվածքում մասնակցում են օլիգո-ցենի խայտարիետ գույնի կավերը, չորրորդականի ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները, ինչպես նաև հրաբխային տուֆերը:

(Բ-2) *Արևշատ-Արգավանդի, Կարմիր Բլուր-Նոր Խարբերդի ենթաշրջան:* Զբաղեցնում է Երևանի և նրա հարակից տարածքների հարավարևմտյան մասերը: Տեխնածին հիմնական գործոններն են՝ քիմիական արդյունաբերության օբյեկտները, ՋԷԿ-ը, Արտաշատի և Դուկասավանի ջրանցքները, տարրեր վայրերում կուտակվող կենցաղային և շինարարական պինդ թափոնները:

(Բ-3) *Հայանիստ-Մասիսի ենթաշրջան:* Զբաղեցնում է տարածքի հարավարևմտյան ծայրամասը՝ Հրազդանի աջ- և ձախափնյա մասերով: Նկատվում է ճնշումային հորիզոնների ջրերի մակարդակի անընդհատ իջեցում, իջել են Երևանի խմելու ջրամատակարարման համար օգտագործվող ինքնարափ հորերի ծախսերը:

(Բ-4) *Բաղրամյան-Արգմի-Արարկիրի ենթաշրջան:* Զբաղեցնում է արևմտյան և հյուսիսային մասերը և ընդգրկում է Բաղրամյան, Պոռշյան, Չովունի, Արգմի, Սիոն բնակավայրերի տարածքները, նաև Երևանի Շահումյան, Դավիթաշեն, Քանաքեռ, Արարկիր թաղամասերը:

(Բ-5) *Շահապ-Արինջ-Նորի ենթաշրջան:* ԵՄ-ի վրա ազդրող տեխնածին գործոններն են՝ շինանյութերի արդյունահանումը և մշակումը, սոսորերկյա և մակերևութային ջրերի ջրառները և հիդրոտեխնիկական կառուցվածքները, աղի արդյունահանումը, ինչպես նաև սելիտեր այլ համակարգեր:

(Բ-6) *Գեղաղիր-Բարձրաշենի ենթաշրջան:* Զբաղեցնում է տարածքի հարավարևելյան մասը: Ընդգրկում է Խաչիսար լեռը, Գեղաղիր, Հացավան, Բարձրաշեն բնակավայրերը: Սոլանքների պատճառով թույլ է տեխնածին բենավորվածությունը: Միակ տեխնածին գործոնն ոռոգումն է, որը կատարվում է սահմանափակ քանակով: Այս պայմաններում տեխնածին բենավորվածության մեծացումը, որոգելի տարածքների ընդարձակումը կրերի սողանքների ակտիվացման: Այժմ նկատվում է սողանքային երևոյթների հարաբերական կայունացում:

Գ. Ուժգին փոփոխված շրջան (Կ 50%-ից ավելի): Զբաղեցնում է Երևան քաղաքի և նրա հարակից տարածքների կենտրոնական, արևելյան, հարավարևելյան և հյուսիսային մասերը: Շրջանում առանձնացվել են հինգ ենթաշրջաններ.

(Գ-1) *Երևանի գողավորության կենտրոնական մասի ենթաշրջան:* Ընդգրկում է Արովյանի պուրակից մինչև Երկաթգծի կայարանը՝ Գետառի աջ- և ձախափնյա մասերով: Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են Գետառ և Զրվեծ գետերի ալյուվիալ-պրոլյուվիալ նատվածքները և ոչ մեծ հզրության հրաբխային տուֆերը: Ալյուվիալ-պրոլյուվիալ նատվածքները ներկայացված են գետաքար-գլաքարերով, տարահատիկ ավագներով, ավագակավերով և կավագագներով: Հիմնական տեխնածին գործոններն են՝ տարատեսակ և բազմաբնույթ շինարարական կառույցները, ջրմուղ-կոյուղու խիտ ցանցը, տրամապորտային հանգույցները: Այսեղ կատարվում է տեխնածին գրունտների առաջացում, աերացիայի գոտու գրունտների

աղտոտում, գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունների, ինչպես նաև ստորերկրյա ջրերի որակական և քանակական ցուցանիշների փոփոխություններ: Նշված երևույթներից ԵՄ-ի վրա առավել բացասական ազդեցություն է քողման գրունտային ջրերի մակարդակի բարձրացումը, որի պատճառով բնակելի շենքերի նկուղային հարկերը լցվում են ջրով քուլացնելով՝ կառույցների սեյսմիկ կայունությունը:

(Գ-2) **Ջրաղեցնում** է Երևանի արևելյան մասը: Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են գիտաբեր կավեր և դրանց վրա տեղադրված Նորքի սարահարթի բազալտները: Հիմական տեխնածին գործոններն են՝ Նորքի ոռոգման ջրանցքը, ջրմուղ-կոյուղու ցանցը, 1–3 հարկանի առանձնատների կուտակումը, Դավիթ Բեկ փողոցի վերջնամասում (մինչև հեռուստատեսության աշտարակ) լանջի ուժեղ բեռնվածությունը՝ շուրջ 5,0–6,0 մ՝ հզորությամբ տեխնածին գրունտները և մեծ մակերես զբաղեցնող Վարդավառի գերեզմանատունը: Հիդրոտեխնիկական կառուցվածքներից ներծծվող ջրային կորուստների և այլ գործոնների ազդեցությամբ ակտիվացել են սողանքային երևույթները:

(Գ-3) **Շորավրուր-Ողջաքերդի ենթաշրջան:** Ջրաղեցնում է Երևանի և հարակից տարածքների արևելյան մասը: Երկրաբանական կտրվածքում մասնակցում են հիմնականում օլիգոցեն-միոցենի կավային առաջացումներ, որոնք մի շարք տեղամասերում արդյունահանվում են զաջի արտադրության համար: Անհան մակերեսներով տարածված են տուֆակոնզլոմերատները և տուֆավազաքարերը: ՈՒժգին փոփոխվածությունը պայամանավորված է սողանքների ակտիվացմամբ, որոնց ներկա ընթացքը կարելի է բնորոշել որպես վատթարացող:

(Գ-4) **Էրեբումի-Նուրարաշենի ենթաշրջան:** Ջրաղեցնում է Երևանի հարավարևելյան մասը: Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են օլիգոցենի կարմրավուն և կանաչավուն երանգի մոխրագույն կավերը: Ուշիենքը հին սողանքային է, որոնք սկսել են ակտիվանալ տեխնածին գործոնների ազդեցության տակ: ԵՄ-ի վրա ազդող հիմնական տեխնածին օբյեկտներն են՝ Նորքի (Վարդաշենի) ոռոգման ջրանցքը, Նուրարաշենի գերեզմանատունը և աղբանոցը:

(Գ-5) **Գետամեջ-Քանաքեռի ենթաշրջան:** Գտնվում է Երևանի հյուսիսային մասում, Գետամեջ Քանաքեռավան բնակավայրերի միջև՝ Հրազդան գետի ձախ ափին: Տեղամասով անցնում են Քանաքեռի՝ ՀԷԿ-ի ջրանցքը և Արզնի-Երևան ջրատարը: Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են Հրազդանի շերտախմբի ապարներ՝ գիտաբեր կավեր, ավազաքարեր, մերգելներ: Այսուել գործում են մի շարք ակտիվ սողանքներ, որոնք հաճախակի վթարում են ջրատարը, որն անցնում է Երևանի մակերեսով՝ հենասյուների վրայով: Ենթադրվում է, որ սողանքների ակտիվացման հիմնական պատճառը Քանաքեռի՝ ՀԷԿ-ից կատարվող ջրերի կորուստներն են:

Ներկայուս ենթաշրջանի խիստ փոփոխվածության վիճակը շարունակվում է տանելով դեպք վատթարացում:

Եզրակացություն: Կախված ուսումնասիրված տարածքի երկրաբանական կառուցվածքից, ջրաերկրաբանական պայմաններից, ԵՄ-ի վրա տեխնածին գործոնների ունեցած ազդեցություններից և նրանց ուժգնության աստիճանից, կատարվող փոփոխությունների ուղղությունից և տեղամասի երկրակոպոտենցիալից, առանձնացված շրջանների և ենթաշրջանների ԵՄ-ի

բարելավման և կայունացման համար պահանջվում են տարբեր քնույթի բնապահպանական միջոցառումներ՝

1. Շահագործված հանքավայրերի ռեկուլտիվացիա; 2. ոռոգման ցանցերի հակաֆիլտրացիոն միջոցառումներ; 3. հորիզոնական ցամաքուրդների մաքրում կամ նորերի կառուցում; 4. տեխնածին բեռնվածությունների սահմանափակում; 5. արտադրական հոսքերի մաքրում օբյեկտներում; 6. կենցաղային հոսքերի մաքրում; 7. լանջերի բնական թեքության պահում; 8. ոռոգման նորմերի սահմանափակում; 9. դիմիարային պատերի կառուցում:

Ստացվել է՝ 05.03.2015

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Սկրտչյան Տ.Գ.** Երևան քաղաքի և քաղաքամերձ շրջանների երկրաբանական միջավայրի զնահատումը տեխնածին ազդեցությունների հիման վրա: Երկրաբանության, աշխարհագույքյան և էկոլոգիայի արդի հիմնախնդիրները: Ե.Խ.Խարազյանի ծննդյան 70-ամյակին նվիրված գիտաժողովի հոդվածների ժողովածու: Եր., 2014, էջ. 198–210:
2. **Վարդանյան Վ.Պ., Սկրտչյան Տ.Գ.** Երևան քաղաքի երկրաբանական միջավայրի փոփոխությունը տեխնածին գործուների հետևանքով: // ԵՊՀ գիտական տեղեկագիր: Երկրաբանություն և աշխարհագույքյուն, 2011, № 2, էջ. 27–32:
3. Требования к геолого-экологическим исследованиям и картографированию (масштаб 1:50000–1:25000). М.: ВСЕГИНГЕО, 1990, 127 с.
4. Геология Армянской ССР. Т. 8, Гидрогоеология. Еր.: Изд-во АН Арм. ССР, 1974.

Т. Г. МКРТЧЯН

ОЦЕНКА ГЕОЭКОЛОГИЧЕСКОГО СОСТОЯНИЯ ЕРЕВАНА И ПРИЛЕГАЮЩИХ ТЕРРИТОРИЙ И ИХ РАЙОНИРОВАНИЕ

Резюме

В работе представлены методика и результаты геоэкологического районирования г. Ереван и прилегающих территорий, где методом математического взвешивания выделены неизмененные, измененные и сильно измененные районы.

T. G. MKRTCHYAN

ASSESSMENT OF GEOECOLOGICAL CONDITIONS OF YEREVAN AND ADJACENT TERRITORIES AND THEIR ZONING

Summary

The paper presents the methodology and results of geoecological zoning of Yerevan and surrounding areas. Unmodified, modified and highly modified areas have been outlined by the method of mathematical weighing.